



Ծրագիրը
ֆինանսավորվում է
Եվրոպական միության
կողմից



ԵՆՀԿ
Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանի գրասենյակ

Ծրագիրը
համաֆինանսավորվում
է
ԵԱՀԿ Երևանյան
գրասենյակի կողմից



Իրականացնող՝
Իրավաբանների
հայկական
ասոցիացիա



Հայաստանի
ԹՀԿ-ների
Հակակոռուպցիոն
կոալիցիա

Իրականացնող՝
Հայաստանի ԹՀԿ-ների
հակակոռուպցիոն
կոալիցիա



Համահեղինակ՝
«Հայաստանի
համայնքների
միություն»



Գործընկեր՝
Ինֆորմացիայի
ազատության
կենտրոն

«ՏԻՄ-երում առկա կոռուպցիոն ռիսկերը»

ԱՄՓՈՓՈՒՄ

Հայաստանի ԹՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիա՝ ի դեմս
«Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական
կազմակերպության և «Հայաստանի համայնքների միություն»
իրավաբանական անձանց միության

Երևան,

2016թՈ

«ՏԻՄ-երում առկա կոռուպցիոն ռիսկերը»

հակակոռուպցիոն միջոցառում (p. Գյումրի).

2016 թվականի հուլիսի 22-ին Գյումրի քաղաքի «Արաքս» հյուրանոցում «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը Եվրոպական միության ֆինանսավորմամբ, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի համաֆինանսավորմամբ և ՀՀ կառավարության աջակցությամբ իրականացվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի շրջանակներում ՀՀ Կառավարության աջակցությամբ կազմակերպեց հակակոռուպցիոն միջոցառում՝ «ՏԻՄ-երում առկա կոռուպցիոն ռիսկերը» թեմայով:

Միջոցառման նպատակն էր ծրագրի շրջանակներում ՏԻՄ-երում առկա կոռուպցիոն ռիսկերի վերահանումը և համապատասխան լուծումների նախանշումը:

Միջոցառմանը մասնակցում էին պետական մարմինների, բիզնես կազմակերպությունների և միավորումների, ԶԼՄ-ների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի փորձագետները:

Միջոցառմանը ներկա էր Շիրակի մարզպետ **Հովսեփ Միմոնյանը** և Գյումրու փոխքաղաքապետ **Վաղարշակ Մխիթարյանը**: Վերջիններս էապես կարևորեցին հակակոռուպցիոն պայքարը, սակայն, միևնույն ժամանակ նրանք չհամաձայնեցին միջոցառման խորագրի հետ՝ նշելով, թե այս դաշտում կառուպցիոն խնդիրներ չկան: Ի պատասխան այս պնդմանը՝ Կարեն Զաղոյանը նշեց, որ տարիներ առաջ նոտարական համակարգի ոլորտի պատասխանատուները նույնպես պնդում էին, թե համակարգում կոռուպցիոն ռիսկեր չկան, սակայն մոնիթորինգից հետո նախկին վարչապետը հայտարարեց, որ նոտարական համակարգում մեծ կոռուպցիոն խնդիրներ են առկա:

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի քարտուղարության համակարգող **Կարեն Զաղոյանն** իր ողջույնի խոսքում նշեց, որ կառավարությունը պետք է ցույց տա հակակոռուպցիոն պայքարի հաջողված օրինակներ և հասարակությունը զգա այդ փոփոխություններն իր կյանքում: Նա տեղեկացրեց ներկաներին, որ կառավարության հետ համագործակցության շրջանակներում իրենց կողմից ներկայացվել են ապօրինի հարստացման քրեականացման և հակակոռուպցիոն անկախ մարմին ստեղծելու վերաբերյալ առաջարկներ, որոնք կառավարության կողմից ընդունվել են, և այժմ օրինագծեր են մշակվում, որոնք այս տարվա աշնանը կներկայացվեն Ազգային ժողովին:

ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի քրեակատարողական և հակակոռուպցիոն քաղաքականության մշակման վարչության պետ **Կարեն Հակոբյանի** խոսքով՝ ՏԻՄ-երում առկա կոռուպցիոն ռիսկերը նվազագույնի հասցնելու լավագույն տարբերակներից մեկը նրանց լիազորություններն ընդլայնելն է և հաշվետվողական լինելը ոչ թե վերադասին, այլ համայնքի անդամներին:

Հայաստանի համայնքների միության նախագահ **Էմին Երիցյանը** նույնպես ընդգծեց, որ տեղական մակարդակում կոռուպցիայի խանխարգելմանը պետք է հասնել ՏԻՄ-երի ավելի հանրային և հաշվետվողական գործելակերպի միջոցով: Պետք է հաղթահարել խորհրդային տարիներից ժառանգած թյուր մտածելակերպը, որ ՏԻՄ-երը ունեն «վերադաս» (մարզպետ, նախարար և այլն) և հաշվետու են նրանց: Բնակչությունը և տեղական ընտրված պաշտոնյաները պետք է զիտակցեն, որ վերադա չունեն ու հաշվետու են համայնքի անդամներին: Ըստ նրա՝ համայնքի անդամները պետք է ունենան կայացած վերահսկողության մեխանիզմ, պետք է լուծվեն մի շարք բյուրոկրատական խնդիրներ, իսկ համայնքի ղեկավարները համայնքի անդամների հետ պետք է անմիջական շփում ունենան:

Ողջույնի խոսքերին հաջորդեցին զեկույցներ ՏԻՄ-երում առկա կոռուպցիոն ռիսկերի, դրանց հաղթահարման մարտահրավերների և այդ ոլորտում ՔՀԿ-ների հետ համագործակցության հնարավորությունների վերաբերյալ, նախանշվեցին այս ոլորտում հետագա համագործակցության և աշխատանքների ուղղությունները:

Հակակոռուպցիոն միջոցառմանը զեկույցներով հանդես եկան՝ Հայաստանի համայնքների միության նախագահ **Էմին Երիցյանը**, ով ներկայացրեց ՏԻՄ ոլորտում առկա կոռուպցիոն ռիսկերը, իրականացվող հակակոռուպցիոն բարեփոխումները և հետագա քայլերը: Նշեց, որ համայնքները պետք է մշակեն իրենց հակակոռուպցիոն ռազմավարությունները, գործողությունների պլանները: Անհրաժեշտ է նաև համայնքային ծառայողների ու ընտրված պաշտոնյաների վերապատրաստման ծրագրերում ներառել համապատասխան ուսումնական մոդուլներ: «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի տեղական փորձագետ՝ **Մարատ Ատովյանը**, ով ներկայացրեց զեկույց «Բարեխղճության ապահովումը համայնքային ծառայության ոլորտում. առկա հիմնախնդիրները» թեմայով, «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրի տեղական փորձագետ՝ **Մարիամ Զադոյանը**, ով ներկայացրեց՝ ՏԻՄ-երում հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման նպատակով ՔՀԿ-ների հետ համագործակցության կարևորությունն ու հեռանկարները:

Չեկույցներին հաջորդեցին ոլորտային քննարկումներն ու հակակոռուպցիոն միջոցառման ամփոփումը:

Խնդիրներ և առաջարկություններ

1. Լրագրողական հետաքննությունների արդյունքների վերլուծությունը հանգեցնում է նրան, որ շատ դեպքերում համայնքների կողմից դուրս գրվող օգնությունները տրամադրվում են հիմնականում ավագանու անդամների բարեկամներին: Նման կոռուպցիոն ռիսկերը վերացնելու համար սահմանված չեն արդյունավետ վերահսկողության և կանխարգելիչ մեխանիզմներ:

Առաջարկ 1. Ստեղծել հասարակական վերահսկողության խորհուրդներ, որոնք կվերահսկեն գնումների, դուրս գրվող օգնությունների և այլ գործընթացներ, կիրականացնեն ՏԻՄ գործունեության մոնիթորինգ և գնահատում:

Առաջարկ 2 Սահմանել շահերի բախման հայտարարագրերի ներկայացում ՏԻՄ ոլորտի ներկայացուցիչների կողմից:

Առաջարկ 3 Մշակել շահերի բախման քաղաքականություններ:

Ծանոթագրություն.

ՀՀ-ն 2007 թվականի մարտից հանդիսանում է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի մասնակից պետություն: Սույն կոնվենցիայի 8-րդ հոդվածը նախատեսում է, որ յուրաքանչյուր մասնակից պետություն պետք է ունենա պաշտոնատար անձանց վարքագծի կանոնագիրք: Կոնվենցիայի 2-րդ մասը սահմանում է որ *յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է ձգտի իր ենթակառուցվածքային և իրավական համակարգերի շրջանակներում կիրառել վարքագծի կանոնագրքեր և ստանդարտներ պետական գործառույթների ճշգրիտ, բարեխիղճ և պատշաճ իրականացման համար:* Կոնվենցիայի 3-րդ մասը սահմանում է որ *Սույն հոդվածի դրույթների իրականացման նպատակներով յուրաքանչյուր Մասնակից պետություն, համապատասխան դեպքերում և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է նկատի ունենա տարածաշրջանային, միջտարածաշրջանային և բազմակողմ կազմակերպությունների համապատասխան նախաձեռնությունները, օրինակ՝ Գլխավոր վեհաժողովի 1996 թ. դեկտեմբերի 12-ի 51/59 բանաձևին կից հավելվածում պարունակվող՝ Պաշտոնատար անձանց վարքագծի միջազգային կանոնագիրքը:*

Կոնվենցիայի սույն հոդվածով սահմանվում է նաև, որ *յուրաքանչյուր Մասնակից պետություն, իր ներքին օրենսդրության հիմնարար սկզբունքներին համապատասխան, պետք է քննարկի այն պաշտոնատար անձանց նկատմամբ կարգապահական կամ այլ միջոցներ կիրառելու հնարավորությունը, ովքեր խախտում են սույն հոդվածին համապատասխան սահմանված վարքագծի կանոնագրքերը կամ ստանդարտները:*

Առաջարկ 4. Անհրաժեշտ է կատարված խախտումների դեպքերով ծառայողական քննությունների արդյունավետության բարձրացմանն և հրապարակայնության ապահովմանն ուղղված միջոցառումներ ձեռնարկել, օրինակ՝ հրապարակել հեռուստատեսության միջոցով, ինչպես արվում է հարկային ոլորտի հետ կապված:

5. ՏԻՄ-երում նկատվում է իրավագիտակցության, հատկապես հակակոռուպցիոն ոլորտի, և իրազեկվածության ցածր մակարդակ: Նեպոտիզմը և պատրոնաժը դիտվում են որպես դրական երևույթներ, օրինակ՝ մարդկային ռեսուրսների կառավարման ժամանակ: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ մեծ համայնքները իրենք են մշակում և իրականացնում հակակոռուպցիոն տարաբնույթ միջոցառումներ:

Առաջարկ 5 ՀՀ-ում նույնպես ներդնել նշված փորձը, իրականացնել իրազեկվածության մակարդակը բարձրացնող և հակակոռուպցիոն արժեհամակարգը փոփոխող միջոցառումներ ինչը թույլ կտա բարձրացնել ինչպես տարբեր ղեկավար պաշտոններ զբաղեցնող անձանց, այնպես էլ՝ հասարակության հակակոռուպցիոն գիտելիքների մակարդակը և կհանգեցնի հակակոռուպցիոն վարքագծի ձևավորմանը: Վերոնշյալն իրականացնել՝ օգտվելով կոռուպցիայի դեմ պայքարում մասնագիտացված հասարակական կազմակերպությունների ներուժից:

Առաջարկ 6. Բոլոր մարզպետարաններին կից ստեղծել երիտասարդական խորհուրդներ, որոնց անդամները կլինեն հակակոռուպցիոն արժեքներ կրողներ և կսերմանեն դրանք:

7. ՏԻՄ-երի աշխատանքը բավարար հրապարակային և թափանցիկ չէ:

Առաջարկ 7. Պարտավորեցնել համապատասխան իրավասու մարմիններին ապահովել ՏԻՄ բոլոր շենքերի հասանելի մասերում տեղեկատվական տախտակների տեղադրումը և դրանցում բոլոր անհրաժեշտ թարմացումների կատարումը: Բնակիչների խոսքերով սա իրազեկման արդյունավետ և հասանելի միջոց է հատկապես գյուղական համայնքներում:

Առաջարկ 8. Բացի այդ, ապահովել էլեկտրոնային իրազեկում:

9. Կոռուպցիոն ռիսկերի բացահայտման համար կարևոր է գույքի և եկամուտների հայտարարագրերի վերլուծությունը:

Առաջարկ 9. Անհրաժեշտ է համայնքային ծառայողների գույքի և եկամուտների հայտարարագրերի վերլուծության հնարավորություններ ընձեռնել հանրությանը՝ վերջիններիս ներառելով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված հայտարարագրման պարտավորություն ունեցող պաշտոնատար անձանց շրջանակի մեջ:

10. Համայնքների կողմից ծառայությունների մատուցման սպասարկման որակի, ծառայությունների մատուցման խոչընդոտող գործոնների վերաբերյալ առկա չեն հետազոտություններ:

Առաջարկ 10. Անհրաժեշտ է համայնքների կողմից ծառայությունների մատուցմանն ուղղված հետազոտություններ իրականացնել: Նմանատիպ հետազոտությունն օգտագործվում է, որպեսզի տեղեկություններ ձեռք բերվեն սպասարկման որակի, ծառայությունների մատուցման խոչընդոտող գործոնների վերաբերյալ: Այս հետազոտությունն ընդգրկում է ծառայությունների մատուցման բազմաթիվ ասպեկտներ և դուրս հանում անարդյունավետ ծառայությունների մատուցման պատճառները